Կոնկրետ լեզուն
պատկերներում

ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Կանանց չլսված պատմությունները վերարտադրողական առողջության վերաբերյալ



Երևան, 2020

ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Գիրքը կազմեց
«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը

Նկարազարդումների և ձևավորման հեղինակ՝
Անի Ասրիբաբայան

«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ստեղծված «Վերարտադրողական առողջության և իրավունքի հարցերով զբաղվող» ցանցի փորձագետների միասնական ջանքերի շնորհիվ հավաքվեցին տարբեր խմբերի կանանց իրական պատմություններ, որոնք անդրադառնում են ՄԻԱՎ-ով ապրող կանանց, լեսբի և բիսեքսուալ կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, եզդի կանանց, գյուղաբնակ կանանց վերարտադրողական առողջության և իրավունքի հիմնախնդիրներին Հայաստանում: Ցանցի անդամները տարբեր ոլորտներում կանանց վերարտադրողական առողջության և իրավունքի հարցերով զբաղվող իրավապաշտպաններ և համապատասխան ոլորտի մասնագետներ են:

Որոշ պատմություններ հավաքվել են Ցանցի՝ հատուկ վերապատրաստում անցած անդամների կողմից, իսկ պատմությունների մի մասը ներկայացված են այն կանանց կողմից, որոնք ենթարկվել են խտրականության տարբեր դրսևորումների:

Այս գրքույկի նպատակն է հանրությանը ծանոթացնել, թե ինչ հիմնախնդիրների են բախվում կանայք վերարտադրողական առողջության պահպանման և վերարտադրողական իրավունքի իրացման շրջանակներում, այդ թվում վերարտադրողական ծառայություններ ստանալիս:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր այն կանանց, ովքեր համարձակություն և քաջություն ունեցան ներկայացնելու իրենց պատմությունները:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի համար անգամ մեկ կնոջ նկատմամբ խտրականության բարձրաձայնումը կարևոր է:

Երևան, 2020

Ներածություն

Վերարտադրողական իրավունքները կնոջ՝ սեփական մարմնի, կյանքի և առողջության վերաբերյալ որոշումների կայացման կարևորագույն մեխանիզմներից են: Պատահական չէ, որ հենց այս իրավունքների իրացման հետ են կապված մի շարք խորքային կարծրատիպեր, նախապաշարումներ, խտրական և վնասակար պատկերացումներ և նորմեր, որոնք կոչված են սահմանափակելու կնոջ՝ ապատ ընտրություն կատարելու հնարավորություններն ու իրավունքները:

Վերջին տասնամյակում Հայաստանում կանայք ձեռք են բերել որոշակի անկախություն՝ տնօրինելու սեփական կյանքը և կայացնելու սեփական մարմնի մասին որոշումներ, սակայն չնայած դրան՝ կանայք շարունակում են բախվել խտրական և կանխակալ մոտեցումների, երբ առնչվում են սեռական և վերարտադրողական առողջությանը և իրավունքին վերաբերող հարցերին: Հայաստանում վերարտադրողական իրավունքներին առնչվող օրենքները, քաղաքականությունները և պրակտիկան դեռևս չեն ապահովում կանանց ինքնուրույն որոշում կայացնելու լիարժեք հնարավորությունները և չեն ներառում կանանց տարբեր խմբերին որոշումների կայացման գործընթացներում:

Վերարտադրողական առողջության և իրավունքի իրացումն ու պաշտպանությունը պետության կարևոր երաշխիքներից է, այն երբեք չպետք է լինի արտոնություն կամ հայրիշխանական համակարգի բարի կամքի դրսևորում:

Հաշմանդամություն ունեցող կանանց
վերարտադրողական առողջության և
իրավունքի մարտահրավերներն
ու խնդիրները:

Բնությունը պետք է իմ հանգիստը։
Ամուսինս ասաց։
Տվ հանգիստ, քո գոգնոցն գնալ։
Գրանցվեցինք նոր։
Ամուսինս գնաց։
Քո կրտսեր տղաներն։
Իմ պարտքն է մնում, բնությունն ինձ ցնցոտիքում։
Ոչինչ չեմ հասկանում, վախենում եմ։

Լսողության խնդիր ունեցող կին Գյումրիից

Միշտ ապրել եմ Գյումրիում՝ բացի դպրոցական տարիներից, քանի որ խուլ անձանց համար նախատեսված միակ դպրոցը գտնվում է Երևանում: 8-րդ դասարանից դպրոցը չեմ շարունակել, քանի որ արդեն անտանելի էր տանից հեռու գտնվելը. անչափ կարոտում էի ընտանիքս ու քաղաքս, իսկ Երևանի գիշերօթիկ դպրոցում չէի ստանում այն սերն ու հոգատարությունը, որի համար ցանկանայի վոհել իմ կարոտն ու զգացմունքները և շարունակել կրթությունս: Մեկ համար պայմաններ ստեղծված չեն, որպեսզի կարողանանք համալսարան ընդունվել, հետագայում աշխատել: Այնպես որ շատերիս համար կրթությունն ավարտվում է դպրոցով, որից հետո ստիպված ենք կատարել ցանկացած աշխատանք՝ երեխաների և ընտանիքի հոգսերն ու ծախսերը հոգալու համար:

Այժմ ամուսնացած եմ, ունեմ երեխաներ, երջանիկ եմ: Չնայած ամուսինս ևս ունի լսողության խնդիր, երեխաներս լսում են: Դեռևս փոքր են, բայց արդեն փորձում են ինձ օգնել, թարգմանել ինձ համար:
Մեր համայնքի ներկայացուցիչների համար արտաքին աշխարհի հետ շփումներն անկախ կերպով իրականացնելը գրեթե անհնար է: Սա ամենամեծ խնդիրն է:

Հասարակությունում քեզ ոչ մի տեղ չեն հասկանում: Նաև չեն ուզում հասկանալ: Անգամ երբ փորձում ես ինչ-որ բան գրելով բացատրել, հաճախ ագրեսիվ կամ արհամարհական արձագանքների ես հանդիպում: Խտրական վերաբերմունքի հանդիպում ենք գրեթե ամենուր ու բոլոր ոլորտներում, բայց ցանկանում եմ խոսել առողջապահական ոլորտում տիրող անհավասար և խտրական դրսևորումների մասին լսողության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ, որոնց ես անձամբ բախվել եմ և շարունակում եմ բախվել:

Բժշկական ծառայությունների կարիք ամենից շատն ունեի հղիության և երեխաներիս ծննդաբերության ժամանակ: Հիմնականում բժիշկների փորձում եմ չդիմել, քանի որ դժվար գործընթաց է ինձ համար. առողջապահությունն ինձ համար անմատչելի է: Բժշկի գնում եմ միշտ սկեսուրիս հետ, որպեսզի ինքն ինձ համար թարգմանի, բայց հաճախ ինքն էլ չի կարողանում խնդիրներս ներկայացնել այնպես, ինչպես ես կուզեի:

Ծննդաբերությունն ինձ համար շատ դժվար փորձառություն էր, հատկապես առաջին ծննդաբերությունը: Ես չէի հասկանում, թե ոնց պետք է ծննդաբերել. ինչ պետք է անեմ, ինչպես պետք է ինքս ինձ և բալիկիս օգնեմ, ինչպես պետք է շնչեմ: Բժիշկները նախապես որևէ բան չէին բացատրել, ծննդաբերության ընթացքում էլ ինչը որ փորձում էին բացատրել, ես, բնականաբար, չէի հասկանում: Ուստի փորձում էի ինքս կողմնորոշվել, թե ինչ է պետք անել: Ինձ թվում էր, որ չեմ դիմանա ցավերին, կարծում էի՝ ծննդաբերության ընթացքում վտանգ է սպառնում և՛ ինձ, և՛ փոքրիկիս: Փառք Աստծո, ամեն ինչ լավ անցավ: Երկրորդ ծննդաբերությունն արդեն համեմատաբար ավելի հեշտ անցավ, քանի որ արդեն պատկերացնում էի, թե ինչ է պետք անել:

Գյումրիում անգամ լսողական ապարատներ ստանալ չենք կարող. պետք է Երևան գնանք, որպեսզի այնտեղ ստանանք: Պետության կողմից տրվող սարքերն, ի դեպ, այնքան անորակ են, որ թույլ լսող անձինք, երբ փորձում են օգտագործել, ավելի շատ գլխացավ են ունենում ամբողջ օրվա ընթացքում, քան օգուտ են ստանում:

Ամեն ինչը Երևանում է կենտրոնացված: Այնպես չէ, որ Երևանում էլ շատ հարմար և մատչելի է, բայց գոնե համեմատաբար հնարավորություններ կան: Երևանում գոնե

թարգմանիչներ կան: Մեր համայնքում թարգմանիչները շատ քիչ են: Երբ շտապ թարգմանչի կարիք ենք ունենում, հաճախ չենք կարողանում գտնել՝ անգամ պատրաստ լինելով վճարել նրանց ծառայությունների դիմաց:

Ես ամենուր սկեսուրիս հետ եմ գնում, որպեսզի ինքն ինձ համար թարգմանի՝ լինի դա հիվանդանոց, խանութ, բանկ, հանրային որևէ վայր: Սկեսուրիս շատ շնորհակալ եմ օգնության համար, բայց խնդիրն այսպես չպետք է լուծվեր: Անգամ քաղաքապետարանում կամ պետական հաստատություններում ժեստերի լեզվով խոսողների համար որևէ մատչելիություն ապահովված չէ: Նույն խնդիրների բախվում եմ, երբ երեխաներիս եմ տանում հիվանդանոց կամ մանկապարտեզ: Շատ եմ ցավում, որ իմ ցավն ու կանացի խնդիրները ստիպված եմ արտահայտել մեկ ուրիշի միջոցով, թեկուզ դա լինի իմ ընտանիքի անդամը: Երբեմն շատ խնդիրներ չեն ասվում կամ ներկայացվում այնպես, ինչպես ես եմ ուզում: Անչափ ցավոտ է տեսնել, որ հասարակության մեջ դու չունես հավասար հնարավորություններ կամ հավասար մոտեցումներ, ինչպես մյուս կանայք:


Դուրս գալուց հետո դրանք բարձրանում են։
Երբ սկսեց խոսել, նրան օրը շնորհավորի։
Դպրոցում։
Տեսնում հաստատվեցի։
Դռները տիշտ դեռ են։
WC
Հարցը տիշտ ուղեկցողն է։
Դուք ոնվ է ասում։ Սիրելուց է տեղյակներ։
ՄասկՀ։
Դաս է հշի։

Անվասայլակով տեղաշարժվող կին Երևանից

- Եթե սկսեմ խոսել սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում ոչ հավասար և խտրական վերաբերմունքից, երևի մի ամբողջ օր չբավարարի,- ծիծաղելով և մի փոքր մտահոգ նշում է անվասայլակից օգտվող աղջիկը, որը բոլորովին վերջերս է ծննդաբերել: Նա նշում է, որ այն բոլոր խնդիրներն ու բացերը, ոչ ներառական և խտրական դրսևորումները, որոնք առկա են առողջապահական ոլորտում, թերևս պայմանավորված են բժշկական հաստատությունների զգայական, ֆիզիկական և վերաբերմունքային խոչընդոտներով, բուժհաստատությունների աշխատակիցների ոչ լիարժեք պատրաստվածությամբ, ինչպես նաև օրենքը կարգավորող մեխանիզմներում առկա բացերով:

- Ցավոք հասարակությունում կա տարածված տեսակետ, որ հաշմանդամություն ունեցող աղջիկը կամ կինը չպետք է ունենա իր անձնական կամ սեռական կյանքը, այն խնդիրները, մտահոգությունները և ուրախությունները, ինչ մյուս աղջիկներն ու կանայք: Ես բավմիցս եմ բախվել այս կարծրատիպային վերաբերմունքին տարբեր բժշկական հաստատություններում:

Ուրեմն ես, որ պարկեցի հղի եմ, որոշեցի գնամ հետազոտման: Գնացի տարածքային պոլիկլինիկա ընկերուհուս հետ: Մտանք սոնոգրաֆիա անող բժշկի սենյակ և նա ընկերուհուս ասաց՝ պառկի՛ր: Ընկերուհիս ասաց, որ ինքը չէ հղին, այլ՝ ես: Բժշկուհին վարմացած արձագանքեց. «Ձե՞ռ ես առնում, ո՞նց թե նա է հղին (խիստ վարմացած ու կասկածամտորեն ինձ նայելով)»: Ապա շրջվեց իմ կողմն ու ասաց. «Բա ո՞նց ես ունենալու, որ հղիացել ես, չես վախենո՞ւմ»: Ես ժպտալով պատասխանեցի, որ եթե հղիացել եմ ու այստեղ եմ, ուրեմն չեմ վախենում: Եվ ի վերջո որոշեց հետազոտել, բայց միայն նրա համար, որ համոզվի՝ ես հղի եմ ու իրեն «ձեռք չեն առնում»:

Ամեն անգամ, երբ գնում էի հերթական ստուգման, կգում էի բուժանձնակազմի հետաքրքրասեր հայացքներն ու անվերջ հնչող, ինձ համար ոչ կարևոր հարցադրումները. «Բա ո՞վ է երեխայի հայրը: Իսկ ո՞նց ես միայնակ մեծացնելու բալիկիդ: Համոզվա՞ծ ես, որ հղիությունն ու ծննդաբերությունը բացասական ազդեցություն չեն ունենա առողջությանդ վրա...»: Ու ես միշտ, համբերատար բացատրում էի, որ ցանկացած կին, անկախ հաշմանդամությունից, կարող է ունենալ ցավեր, խնդիրներ կամ բարդություններ, և պետք չէ ցանկացած խնդիր կամ բորբոքում վերագրել իմ հաշմանդամությանն ու անվասայլակով տեղաշարժվելուն:

Ամենացավոտ պահերից էր, երբ գնում էի բժշկի մոտ, ու բժիշկը, ինձ հետ խոսելու փոխարեն, միշտ ինձ վերաբերող հարցերն ուղղում էր ուղեկցողիս: Ու այս երևույթը շատ ակտուալ է բոլոր բուժհաստատություններում: Չգիտես ինչու բուժաշխատողներին թվում է, որ եթե դու ունես հաշմանդամություն, ուրեմն չես կարող ճիշտ և հստակ պատասխան տալ: Ու այսպես շարունակ կարող եմ երկար թվարկել այն բոլոր խոչընդոտներն ու խտրական դրսևորումները, որոնց բախվում են տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք իրենց առողջապահական իրավունքն իրացնելիս: Խտրականությունը սկսվում է հենց անմատչելի մուտքից, ընդունարանից, վուգարանից, ոչ հարմար աթոռներից և վնսման սեղաններից:

Հուսով եմ՝ իրոք կգա մի օր, երբ այլևս չենք խոսի այս խնդիրներից, ու առողջապահական ոլորտի մեր մասնագետները կլինեն այնքան իրավեկ, փորձառու, հմուտ և համբերատար, որ մենք չենք բախվի խտրական վերաբերմունքի: Իսկապես պետք է հաշմանդամության վերաբերյալ թեմաները ներառվեն բժշկական հաստատությունների ուղեցույցներում և մոդուլներում:

Ձեռք եմ տալիս:
Ինչ որ ուս է հրկի:
Հոմբրեպատրը, փորձառու, հմուտ և հոգատար վիճակը ցեռհարկ
Ոչ, ձեռ չի տալիս:
Ուս եմ հրկի:
Լավ, դե պատկիր հերթապահեմ:
Բա ինչ ես անելու:
Ձեռ մխիթարեմ:
Դրանք հերթապահ եմ, տարբերն չեմ մխիթարեմ:
Պետք է ստանվում հերթի վերաբերյալ հաշվետվությունը:

ՄԻԱՎ-ով ապրող կանանց վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մարտահրավերներն ու խնդիրները:

Դեղ չեմ հդիտանում, բժիշկ:
Դեղ թե ուշ կդիտանաս:
Վերջապես հդկայա:
Անկողնային է քանիսն:
Տանը.
Դիտարկման են.
Տոքսիկոզի սիրդրդիսում հանցար ուռուցիկ հանդիսանալ:

Պատմություն 1.

Աղջիկս բավական մեծ էր, և ամուսնուս հետ երկար ժամանակ երկրորդ բալիկ էինք պլանավորում, սակայն չէր ստացվում: Հիմնականում բժիշկները նույն բանն էին ասում, որ ամեն բան նորմալ է, որ անհանգստանալու կարիք չկա և վաղ թե ուշ ես կհղիանամ ու անպայման երկրորդ բալիկ կունենամ:

Վերջապես հղիացա: Այնքան երջանիկ էի, որ կրծքիս տակ կրում եմ այնքան երկար սպասված իմ փոքրիկին: Մեր ընտանիքում իսկական տոն էր, ամուսինս աջ ու ձախ էր գնում ու հարցնում՝ արդյո՞ք որևէ բանի կարիք ունեմ, արդյո՞ք սիրտս ինչ որ բան է ուզում:

Գիշերն ուժեղ ցավից ու որովայնի շրջանում անտանելի ծակոցից արթնացա: Շտապ օգնության բժիշկը խորհուրդ տվեց անմիջապես տեղափոխվել հիվանդանոց: Առանց վայրկյան կորցնելու՝ գնացինք հիվանդանոց: Պարզվում է՝ արտարգանդային հղիություն էր, և ստիպված փողերիցս մեկը հեռացրին: Անասելի է այն տխրությունն ու դատարկությունը, որ պատել էր ինձ: Ամուսնուս երբեք այդքան անօգնական ու ընկճված չէի տեսել:

Նոր էի սկսել ապաքինվել, կարծես ընդունել էի այդ իրողությունը, երբ առողջական վիճակս սկսեց վատանալ: Անընդհատ բարձր ջերմություն էի ունենում, վատ ինքնազգացողություն, նիհարում էի ու չէի հասկանում պատճառը: Բոլորը մտածում էին, որ հավանաբար հղիության հետ կապված սթրեսն է պատճառը: Արդեն երկար ժամանակ էր՝ ջերմությունս չէր իջնում ու հազիվ էի կարողանում շարժվել: Հիվանդանոցից հիվանդանոց էինք գնում, ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Հերթական այցերից մեկի ժամանակ բժիշկը խորհուրդ տվեց տուբերկուլյոզի հետազոտություն անցնել: Մտքիս մեջ նեղվեցի բժշկիցս, որ էլ տեղ չթողեց, որ չուղարկի: Ինքս ինձ հետ մտքում խոսում էի, որ այս մի տեղն էլ կգնամ ու վերջ, ինչ լինում է, թող լինի:

Հաջորդ առավոտն ամուսնուս ուղեկցությամբ գնացինք Աբովյանի տուբդիսպանսեր: Բոլոր անհրաժեշտ հետազոտություններ անցնելուց հետո ինձ պահեցին ստացիոնար բուժման: Ինձ մոտ տուբերկուլյոզ էր ախտորոշվել:

Հավիվ էի այս ախտորոշումն ընդունել, երբ բժիշկը հայտնեց նաև, որ ինձ մոտ ՄԻԱՎ վարակ է ախտորոշվել: Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ինչո՞ւ ես, իսկ երեխաս առո՞ղջ է, բա ամուսի՞նս, իսկ երկրորդ երեխա կարո՞ղ եմ ունենալ... այս ու նմանատիպ այլ հարցեր հանգիստ չէին տալիս:

Դժվար էր ընդունել, որ ես ՄԻԱՎ վարակ ունեմ, դժվար էր պատկերացնել, թե ինչպես եմ շարունակելու ապրել մի հասարակությունում, որտեղ պետք է միշտ թաքցնեմ, թե ինչ դեղեր եմ խմում, թե ինչու եմ հաճախակի բժշկի գնում, քանի որ եթե իմանան պատճառը, գուցե երեխայիս վատ վերաբերվեն, ինձ հետ չշփվեն, արհամարհեն, պիտակավորեն...

Ամենաանտանելին այն էր, որ մտածում էի, որ ես այլևս չեմ կարող երեխաներ ունենալ, քանի որ վարակված եմ ՄԻԱՎ-ով: Տուբդիսպանսերում բավականին երկար ժամանակ ստացել էի ստացիոնար բուժում: Տուբերկուլյոզի դեղերի կողմնակի ազդեցությունները բավականին ծանր էին, և անընդհատ մտածում էի բուժումից հրաժարվելու մասին. միակ բանը, որ ինձ ապրելու ու պայքարելու ուժ էր տալիս, իմ տանը սպասող երեխան էր ու ամուսինս. նա զոր ու գիշեր իմ կողքին էր, ամեն հարցում աջակցում էր ինձ, պայքարելու ուժ տալիս:

Տուբերկուլյոզի բուժումն ավարտեցի և արդեն բավական լավ էի զգում:

Բայց ՄԻԱՎ-ի հետ կապված բավականին հարցեր ունեի, որոնց պատասխանները դժվար էր գտնել միայնակ: Սկսեցի հաճախել փոխօգնության խմբերի, տարբեր հանդիպումների, որտեղ անընդհատ նոր բաներ էի իմանում ու ոգևորվում:

Մի օր խմբերից մեկի ժամանակ մի կին պատմում էր, թե ինչպես է պլանավորել և երեխա ունեցել ՄԻԱՎ կարգավիճակն իմանալուց հետո: Շատ էի վարմացել, միևնույն ժամանակ ոգևորվել, որ վերջապես կարող եմ ինձ թույլ տալ երազել, որ մի օր երկրորդ բալիկ կունենամ:

Հիշեցի, որ արտարգանդային հղիությունն ընդհատող բժիշկն ինձ ասել էր, որ եթե նույնիսկ բնական ճանապարհով չհղիանամ, կարող եմ նաև արտամարմնային բեղմնավորման միջոցով հղիանալ, որ նման պարագայում իմ շանսերը բավականին բարձր են:

Շատ էի ուրախացել, ոգևորվել, երբ խմբին մասնակցող մասնագետ ասում էր, որ հղիանալու, ծննդաբերելու կամ առողջ բալիկ ունենալու համար ՄԻԱՎ-ն այլևս խոչընդոտ չէ: Արագ տուն վերադարձա ու ամուսնուս պատմեցի, որ մենք դեռևս հնարավորություն ունենք, և որ ամեն ինչ չէ, որ կորած է: Ամուսինս այդ խմբերին չէր գալիս, նա խուսափում էր իր մասին այլ մարդկանց հետ խոսելուց:

Արագ գտա բժշկի համարը, որը ասել էր, որ եթե բնական ճանապարհով չստացվի, կարող եմ նաև արտամարմնային տարբերակը փորձել, և վանգեցի, պայմանավորվեցի այցի համար:

Սիրտս կարծես դուրս էր թռչում՝ այնպես արագ էր խփում: Մի կողմից հույս կար, որ վերջապես կարող էի երկրորդ բալիկ ունենամ, մյուս կողմից էլ վախենում էի կարգավիճակիս մասին խոսել:

Ի՞նչ անեմ, ինչպե՞ս ասեմ: Չասել չեմ կարող, միևնույնն է նախնական փուլում հետավոտելու են և այսպես թե այնպես իմանան: Գուցե միանգամից ավնվորեն ասե՞մ. հա, հաստատ. ավնվությունս հաստատ կգնահատվի: Համ էլ ես ի՞նչ եմ արել, որ ինձ մերժեն: Ախր իմ բժիշկն ինձ հարյուր տարի է՝ ճանաչում է, միշտ լավ հարաբերությունների մեջ ենք եղել, ինչի՞ պետք է մերժի:

Այդ դեպքում ձեր դատողությունը ճիշտ է:
Ձեզ ձեր հետ ՄԻԱՎ է ախտորոշվել:
Դուք ամեն գիշեր, քանի ապրում եք...
Ստեղծ ինձ լավ կլինեմ:
Գիտակցություն:
Փոխզիջումային խումբ.
Ձեզ ձեր սրտանցից երբեմն ուզենում:
ՄԻԱՎ-ը խոշտանգող է...
դիտարկեմ:

Խոսում էի ինքս ինձ հետ, կռիվ տալիս: Ուժ գտա մեջս և բժշկիս հետ խոսեցի: Նրան ասացի, որ մի կարևոր բան կա, որ կուզենամ առանձին քննարկել: Խնդրեցի, որ մնացած բուժանձնակազմը դուրս գա: Զարմացած ինձ էին նայում, թե ինչ գաղտնիք կարող եմ ունենալ:

Բոլորը դուրս եկան: Բժիշկս մի տեսակ զարմացած ինձ էր նայում: Վախից քարացել էի, ձեռքերս ու ոտքերս սառել էին, սառը քրտինք էր պատել: Աչքերս չէի կարողանում բարձրացնել ու նրա աչքերի մեջ նայել: Կարծես ինչ որ վատ բան արած լինեի:

Չգիտեմ էլ որքան էր անցել, վերջապես համարձակություն հավաքեցի և պատմեցի բժշկիս, որ մոտ մեկ տարի առաջ ՄԻԱՎ է ախտորոշվել: Նա կարծես այլմոլորակային տեսած լիներ: Կտրուկ փոխվեց դեմքը, մռայլվեց: Մեկ վայրկյանում կարծես անծանոթ, օտար դարձավ: Սկսեց երկար-բարակ բաներ ասել, որ ՄԻԱՎ-ը կարող է խոչընդոտ լինել: Հետո սկսեց արդարանալ, որ ինքը որևէ խնդիր չունի, սակայն կարող է կլինիկայի ղեկավարները դեմ լինեն ու էսպիսի բազմաթիվ արդարացումներ:

Արդեն չեմ հիշում, թե որքան եմ նստած մնացել ու նա ինչեր է հորինել, խոսել: Միակ բանը, որ հիշում եմ, վերջին նախադասությունն էր.

-Դե դու գնա, ես կճշտեմ ու քեզ կկանգեմ, թե արդյո՞ք դեմ չեն լինի կլինիկայի ղեկավարները, եթե այդ միջամտությունն իրականացնենք:

Կլինիկայից դուրս եմ եկել ու արցունքներս չեմ կարողանում զսպել: Թափվում են աչքերիցս՝ կարծես ապարդյուն ջանալով մաքրել այն խարանը, որ դաջված էր դեմքիս:

Մի քանի օր չէի կարողանում ոչինչ անել: Ուզում էի ջնջեմ հիշողությունս, որ մոռանամ այդ հայացքն ու անտարբերությունը:

Երրորդ օրն էր անցնում, և այդպես էլ բժշկից որևէ լուր չկար: Վստահ էի, որ նա չի վանգելու, բայց թաքուն հույս էի փայփայում, որ գուցե խոսի, համոզի ղեկավարներին ու այնուամենայնիվ ինձ վանգի: Ամուսնուս համոզում էի, որ դե վբաղված մարդ է, կվանգի էլի:

Չորրորդ օրը ես փորձեցի կապվել նրա հետ, հետո հաջորդող մի քանի օրը ևս, բայց այդպես էլ իմ վանգերը մնացին անպատասխան…

Փառք Աստծուն, մեծ աղջիկս առողջ է ու ամեն օր մեկ երջանկացնում է իր ներկայությամբ, բայց երկրորդ բալիկ ունենալն այդպես էլ երազանք մնաց, չնայած նրան, որ այսօր կա կանխարգելում, և հանգիստ կարող էի առողջ երեխաներ ունենալ…

Հարկրորդ երեքսաս ռեհեռալը երդվյանք Տեսց...
Բժիշկ, կարող եմ հերթագրվել այցի համար:
Կարող եմ ձեզ հետ սատեցնի խոսել:
Ձեզ հետ զեկուցարանը դեռ չեղել...
Ձեզ տար ՍԻԱՎ ն...
Ձեզ կցանգեմ ձեզ...
Բժիշկ
սանգ
տեղադրատրան...

Դարձյալ ենք գրանցվել:
երկու օր հետո.
Դրե տվեք ինձ լավ հիշեք. հաջորդ այցի ցնցի տվեք ամիսը կգամք:
Անպայմանորեն հետաքննություն անենք:
Հղիություն չունի այցի:
Դարձյալ եմ հարցնում հետաքննությունը կարիք կա:
Գնացեք այս հասցեով, ցանկալի է այսօր:
Հակ ինձ է պատասխանել:
Ձեր հարցի տարբերակ չկա հիշեք գերդեր դա ինձ է:

Պատմություն 2.

Երկրորդ հղիությունն էր: Սկեսուրիս հետ գնացել էինք հիվանդանոց՝ գրանցվելու և հաշվառման կանգնելու: Բոլոր անհրաժեշտ հետազոտություններ անցնելուց հետո բժիշկն ասաց, որ ըստ նախնական տվյալների՝ ամեն բան կարգին է, և եթե հետազոտության արդյունքներն էլ նորմալ լինի, հաջորդ այցը կարող եմ պլանավորել մեկ ամիս անց:

Հանգիստ խղճով տուն գնացինք, որ կարծես թե ամեն բան կարգին է: Երկու օր անց (լավ հիշում եմ ուրբաթ օր էր) բուժքույրն էր վանգել մեր տուն և շատ շտապ կանչել:

Երբ ներս մտանք, բժիշկը մի տեսակ այլայլված ձայնով ասաց.

-Գիտեք՝ էսպիսի մի բան է տեղի ունեցել, արյան սրվակը ջարդվել է, և հնարավոր չի եղել հետազոտությունն իրականացնել, կրկնակի հետազոտության կարիք կա, և լավ կլինի մոտենաք այս թղթի վրա նշված հասցեին: Ցանկալի է այսօր կամ ամենաուշը երկուշաբթի:

Հարցին, թե ինչ հետազոտություն է, ինչ խնդիր կա, նա պատասխանեց.

-Ձեր հարսի մոտ նախնական ՄԻԱՎ է հայտնաբերվել: Եթե ախտորոշումը հաստատվի, ես խորհուրդ կտամ անմիջապես ազատվել երեխայից: Հասկանում ե՞ք ՄԻԱՎ, ՍՊԻԴ: Գիտե՞ք դա ինչ է:

Սկեսուրս արագ վերցրեց թղթի կտորը, որի վրա գրված էր հասցեն, ու դուրս եկանք: Նույնիսկ տուն չբարձրացանք կամ ամուսնուս չկանգեցինք: Նստեցինք առաջին պատահած տաքսին ու արագ գնացինք նշված հասցեով: Ամբողջ ճանապարհին մի բառ չենք խոսել. սա ի՞նչ հասցե է, այս ո՞ւր ենք գնում,- ինքս ինձ հարցնում էի ու մտածում, որ հավանաբար ինչ որ շփոթմունք է եղել:

Ամբողջ ճանապարհին տաքսու վարորդը կարմացած նայում էր հայելու մեջ ու կարծես փորձում գուշակել, թե ինչ գործ ունեն այս կանայք այդ հասցեում:

Վերջապես տեղ հասանք: Մուտքի վրա գրված էր ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն:

«Ես ինչ գործ ունեմ այստեղ, հաստատ ինչ որ սխալմունք է» - մտածում էի, ինքս ինձ համոզում:
Անկեղծ որ ասեմ, շատ տեղեկություն չունեի ՄԻԱՎ-ի մասին: Միայն գիտեի, որ ՁԻԱՀ-ը նույն ՍՊԻԴ-ն է, ու որ այն մահացու հիվանդություն է:

Բժիշկը խորհրդատվություն տվեց, հետո արյան նմուշ վերցրին: Ասաց, որ պատասխանը պատրաստ կլինի երկուշաբթի:

Հիշում եմ՝ բժիշկը խորհրդատվության ժամանակ ասում էր, որ եթե նույնիսկ ինձ մոտ ՄԻԱՎ ախտորոշվի, ապա դա որևէ ձևով չի կարող խոչընդոտել առողջ երեխաներ ունենալուն, բայց ես ի վիճակի չէի լսել կամ ընկալել ասածը: Միայն մի հարց էր ուղեղումս. ինչո՞ւ, ինչո՞ւ ես, ինչո՞ւ պիտի իմ կյանքում նման բան լինի…

Ամուսնուս բարեկամուհին, որն աշխատում է Երևանի հիվանդանոցներից մեկում որպես մանկաբարձ-գինեկոլոգ, ուրբաթ երեկոյան մեզ հյուր էր եկել: Բոլորս մտահոգ, անտրամադիր ու լուռ էինք: Մի քանի անգամ հարցրեց, թե ինչ է պատահել, սկեսուրս պատմեց ողջ եղելությունը:

Ամուսնուս բարեկամուհին կարծես կրկնում էր այն բառերը, ինչ ասել էր հիվանդանոցի բժիշկը.

-ՄԻԱՎ, հասկանո՞ւմ եք էս ինչ պատմության մեջ եք ընկել, բա երեխա՞ն, ավելի լավ է ապատվեք:

Շաբաթ և կիրակին կարծես մի դար լիներ: Չէր անցնում ժամանակը: Ինտերնետում հապար ու մի տեսակի տեղեկատվություն գտա, որոնք երբեմն ավելի էին մեծացնում իմ վախերը:

ՋԻՍՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Ուզում եմ էրֆյուզերդի գը կնշեմ։
Տանը.
Դեռ ճոպանիկ դրսումն է, դու չի խանգարում էրեխու ուշադրությանը։
Դեռ մի քիչա եմ, մի քիչա եմ...
Տանը.
Տանը.
Դեռ ե պատրաստվել։
Ավելի լավ ե ապրում էրեխայդիս։

Չարաբաստիկ երկուշաբթին սարերի ետևում չէր: Թե մինչ այդ չէր անցնում ժամանակը, հիմա կարծես չէի էլ ուզում, որ անցնի: Չէի ուզում մոտենալ կենտրոնին, վախենում էի լսել ճշմարտությունը:

Հետապոտության արդյունքները հաստատեցին ՄԻԱՎ վարակի առկայությունը:

Բժշկի ասածներից ոչ մի բառ չեմ հիշում: Միակ բանը, որ դաջվել էր մտքումս, այն էր, որ դեղերը կան, կխմես և երեխադ առողջ կծնվի, և դու երկար կապրես:

Հետապոտության արդյունքներով մոտեցա հիվանդանոց, որտեղ հաշվառված էի: Գինեկոլոգս, նայելով հետապոտության արդյունքներին, միանգամից հասկացնել տվեց, որ որևէ գործ չի ուզում ունենալ ինձ և իմ նմանների հետ, որ ավելի լավ է ընդհատեմ հղիությունը և չեզոքացնեմ բոլոր ռիսկերը: Սեղանի վրայից արագ վերցրի թղթապանակը, որի մեջ բոլոր հետապոտությունների արդյունքներն էին, ու դուրս եկա սենյակից:

ՁԻԱՀ-ի կենտրոնի բժիշկը ասել էր, որ կան բժիշկներ, որոնք փորձ ունեն ՄԻԱՎ-ով ապրող կանանց հետ աշխատելու և առանց խնդիրներ առաջացնելու ընդունում են, և որ բոլոր կանխարգելիչ միջոցառումները ձեռնարկելու պարագայում լիովին առողջ բալիկ կունենամ, ու ՄԻԱՎ-ը բնավ պատճառ չէ հղիությունն ընդհատելու համար:

Բավմաթիվ հարցեր ունեի. ո՞ւմ և ինչի՞ն հավատայի՝ ամուսնուս բարեկամուհո՞ւն ու բժշկին, որ ասել են արագ ընդհատել հղիությունը, թե՞ կենտրոնի բժշկին, որ ասում է՝ ոչ մի խնդիր չկա: Կամ գուցե ինտերնետում տեսածս տեղեկատվությա՞նը, որը շատ բավական է…

Անորոշության վախը չափազանց ուժեղ էր, մտքիս թռիչքն՝ անսահման: Արդեն պատկերացնում էի, թե ինչպես ենք ես ու ամուսինս մահացել՝ անտեր թողնելով մեր երեխային: Հերթական այցի ժամանակ բժիշկս ստիպեց, որ մի կնոջ հետ ծանոթանամ, որը նույնպես անցել էր նույն ճանապարհով:



Այս կնոջ խորհուրդների, փորձի և նրա հետ պարբերաբար զրույցների շնորհիվ ես կարողացա հաղթահարել գրեթե բոլոր վախերս ու նորից սկսեցի ապրել…

Երեխաս առողջ է իմ և ամուսնուս հետևողականության և առկա կանխարգելման միջոցառումների շնորհիվ: Մենք էլ ապրում ենք մեր բնականոն կյանքով՝ ուղղակի ամեն օր խմելով մեր դեղերը…

Հղիության արհեստական ընդհատման իրավունքի մարտահրավերները։

Գնում ես
քաղաք։

3 օր նրան չի
հետը կգաս։




3 օր հետո

Պատմություն 1. հղիության արհեստական ընդհատումը գյուղաբնակ կանանց շրջանում:

24 տարեկան էի, ամուսնացած էի և ունեի 2 երեխա, մեծս՝ 3 տարեկան, փոքրս՝ 1.5: Ամուսինս և սկեսրայրս զբաղվում էին արտագնա աշխատանքով՝ մեկնում էին ՌԴ սեզոնային աշխատանքի: Մենք ապրում էինք Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկում: Դեկտեմբերին ամուսինս վերադարձավ Ռուսաստանից, ամեն ինչ լավ էր ընտանիքում, միայն թե ամուսինս չէր համաձայնում պաշտպանվել, որ չհղիանամ: Երբ վերադարձավ, ասացի՝ գուցե պաշտպանվե՞նք, որովհետև արդեն 2 երեխա ունենք, մեր ֆինանսական պայմաններն էլ էն չեն, համ էլ ամուսինս տարվա 9 ամիսը այստեղ չի: Ասաց՝ չէ, ես չեմ պաշտպանվի, ինչի՞ս ա պետք՝ պաշտպանվեմ, համ էլ դե տենց հաճույքը էն չի: Նախկին հղիություններս ավարտվել են երեխաներիս ծնունդով: Սիրտս զգում էր, որ էլի հղիանալու եմ, այդպես էլ եղավ: Հունվարին «չհիվանդացա», բայց մեր գյուղում դեղատուն չկար, որ թեսթ գնեի: Ամուսնուս ասացի, որ կասկածներ ունեմ, որ հղի եմ, ասաց՝ շատ լավ է, կունենանք 3-րդին, բայց ես չէի ուզում 3-րդին հիմա ունենալ: Շատ դժվար որոշում էր, որովհետև պետք է ամուսնուս դեմ գնայի, բայց հասկացա, որ պետք է հղիությունս ընդհատեմ: Ամուսնուս ասացի, որ պետք է գնամ Գավառ, գործեր կան, մեծիս մանկապարտեզ ընդունելու համար թուղթ են ուզել, սկեսուրս ուզեց հետս գալ, բայց մի ձև կարողացա մենակ գնալ քաղաք: Գնացի մեր հիվանդանոց՝ իմ ծնունդն ընդունող բժշկուհու մոտ, ասացի, որ կասկածում եմ, որ հղի եմ, ուզում եմ աբորտ անեմ: Էխո արեց, ասաց՝ հա 10 շաբաթական հղի ես. սկզբում շատ համոզում էր, որ չանեմ, պատմեցի, թե ինչի եմ ուզում, ասաց՝ փողի համար ո՞վ ա աբորտ անում, այ մարդ, ո՛չ առաջինն ես, ո՛չ էլ վերջինը, ասաց, որ լավ կլինի ունենամ, լավ մամա եմ ու

էլի տենց բաներ, բայց դե ես ասացի՝ չէ, որոշել եմ արդեն, ու ասացի նաև, որ հանկարծ մերոնց չասի: Դրանից հետո հավիվ համովեցի, որ սկսի էդ պրոցեդուրան, մեկ էլ ասաց՝ վա՜յ մոռացա, նախարարությունից հրաման կա, որ 3 օր պետք ա կինը սպասի, լավ մտածի, վերջնական որոշի, նորից հետ գա, որ անենք: Ես ամեն կերպ համովում էի բժշկուհուն, որ անի, ասում էի, որ եկել եմ, արդեն հավար անգամ մտածել եմ, ասում էր՝ չէ, 3 օր ա, գնա մտածի, հաստատ կփոշմանես էլ չես էլ գա:

Ես ահավոր ապրումներով հետ գնացի մեր գյուղ, ախր ո՞նց կարամ 3 օրից նորից խաբեմ ու գնամ քաղաք, իսկապես սա ինձ համար ահավոր վիճակ էր: Համ էլ ախր վախենում էի, որ ամուսինս կհասկանա, որ խաբել եմ: Այդ 3 օրը ահավոր էր ինձ համար, էդ որոշման հետ ապրել 3 օր, ոչ մեկ իսկապես դա չի հասկանա, մինչև չանցնի էդ ամենի միջով: Հունվարի 20-ն էր, լավ եմ հիշում, ասացի առավոտ լույսը բացվի, էլի գնամ, ասեմ թուղթը վերցնելու եմ գնում քաղաք: Բայց առավոտը ահավոր ձյուն էր եկել, ճանապարհը փակվել էր, էդ օրը գավելներն էլ չէին աշխատում: Սպասում էինք, որ տրակտորը գա, մաքրի ճանապարհները: Ահավոր տագնապի մեջ ընկա, որովհետև էս ձյունը կարող էր երկար գալ: Ես չեմ կարող նկարագրել իմ ապրումները՝ վախ, մեղքի զգացում, տագնապ, սաղ խառնվել էր մոտս: 7 օր հետո միայն կարողացա քաղաք գնալ, գնացի էլի բժշկուհու մոտ, ասաց՝ ուշացրել ես, 12 շաբաթդ անցել է, էլ ինչ աբորտ, մոռացի, գնա տուն, երկուշաբթի կգաս, որ հաշվառենք:

Այդ պահին պատրաստ էի ամեն քայլի, մենակ թե չունենամ այդ երեխային: Հիշեցի, որ ընկերուհիս պատմել էր, որ իր ծանոթներից մեկը խոտաբույսերից կարող է թուրմ պատրաստել, որը վիժում է առաջացնում: Զանգեցի ընկերուհուս, խնդրեցի, որ օգնի ինձ: Ընկերուհիս մեկ ժամ հետո բերեց այդ թուրմը, ջրով բացեցի ու խմեցի: Երկու ժամից հետո մոտս արյունահոսություն սկսվեց, ամբողջ գիշեր արյունը գալիս էր: Տանեցիները իմացան, բայց լավ է՝ ոչ մեկի մտքով չանցավ, որ ես եմ միջամտել, որ սկսվի



արյունահոսությունը: Առավոտյան գնացինք էլի հիվանդանոց, որովհետև շատ արյուն էի կորցրել, բժշկուհին նայեց, ասաց, որ վիժում եմ, ու բժշկական միջամտություն արեց: Ասաց լավ կլինի, որ երկու շաբաթ պառկեմ տանը, ծանրություն չբարձրացնեմ: Ասաց, որ մեռնելուց եմ պրծել:

Ասեմ, որ ամուսինս փետրվարին մեկնեց Ռուսաստան, երբ հետ եկավ, արդեն ես նախապես մտածել էի՝ ոնց չհղիանամ: Բայց ես կյանքում չեմ մոռանա էդ ամենը:

Ամուսնս վերջնական է։

Շատ կգամ։

Բայց դեռ շատակար է։ Տրամադիր չեմ։

Այս տարին է։ սարսափ կլինի։

Ստորագրություն։

Պատմություն 2.

Երեխաս դեռ 10 ամսական էլ չկար, երբ հանկարծակի հայտնաբերեցի, որ նորից հղի եմ: Ուրախության փոխարեն տագնապի մեջ էի, մտածում էի՝ ինչպես պետք է նորից հղիություն տանեմ, երբ նախորդ ծննդաբերությունիցս հետո ինձ բաժին էին հասել մի շարք քրոնիկ առողջական խնդիրներ: Անգամ ցանկություն չունեի հարցը քննարկել ամուսնուս հետ, քանի որ շատ բարկացած էի, որ ինքնուրույն որոշում էր կայացրել, որ այդ անգամ պաշտպանվելու կարիք չկա: Եվ այդ մի անգամը ճակատագրական եղավ: Որոշումս վերջնական էր. պետք է դիմեի աբորտի, որը, հեշտ որոշում չէր ինձ համար և հավատացած եմ շատ ու շատ կանանց համար, որոնք տարբեր պատճառներով դիմում են, սակայն մեծ քննադատության արժանանում հասարակության կողմից: Պայմանավորվեցի բժշկիս հետ, երեխայիս համար հավիվ կարողացա պահող գտնել և գնացի հիվանդանոց, որպեսզի որքան հնարավոր է շուտ ժամկետում իրականացնեմ աբորտ: Բժիշկս վնեց, բայց ասաց, որ դեռ շուտ է դիմել այս միջամտության, և հորդորեց մեկ շաբաթ անց նորից գնալ և այդ ընթացքում լավ մտածել: Անցավ մեկ շաբաթ, որոշումս հաստատուն էր, նորից փորձեցի երեխայիս համար պահող գտնել և գնացի հիվանդանոց՝ մտածելով, որ այս անգամ արդեն ճիշտ ժամանակն է: Բայց չէ, բժիշկս նորից ասաց, որ գնամ և դիմեմ մեկ շաբաթ անց, այսպես անցան երևի երեք շաբաթներ, որոնց ընթացքում փորս սկսել էր մեծանալ, հույզերս ինձ ներսից ուտում էին, բայց ես չէի կարող այդ պահին ևս մեկ հղիություն տանել: Հերթական վնման ընթացքում բժիշկս, առանց ինձ զգուշացնելու, բարձրաձայն միացրեց պտղի սրտի աշխատանքը, և ես բարձրաձայն լսում էի, թե ինչպես էր նրա սիրտն աշխատում և այլևս չկարողացա հույզերս զսպեմ և սկսեցի արտասվել: Բժիշկս ձեռքս բռնեց և սրտացավորեն հարցրեց՝ ի՞նչ է երեխայիդ սեռը, ասացի՝ տղա է,

ասաց՝ դե այս մեկն էլ աղջիկ կլինի, միասին կմեծանան: Բայց ես միևնույն է ասացի, որ հիմա չեմ կարող և պետք է աբորտ անեմ: Նա միանգամից ձեռքս բաց թողեց և ասաց, որ գնամ վերև և պատրաստվեմ, ու բուժքրոջն էլ հորդորեց, որ վերևում զգուշացնի, որ պտուղը խնդիրներ ունի, դրա համար էլ աբորտ ենք անում: Ես չհասկացա՝ ինչու ինքը այդպես ասաց, քանի որ հղիությունս դեռ ութ-ինը շաբաթական էր և օրինական ձևով կինն իրավունք ունի մինչև տասներկու շաբաթական ընդհատի հղիությունն իր կամքով: Այնուամենայնիվ բարձրացա վերև, որտեղ ինձ սպասվում էին մի շարք դաժան դրվագներ: Բոլորը ինձ էին նայում, իրար մեջ փսփսում էին, որ եկել եմ աբորտ անեմ, բոլորին ստիպված էի բացատրել, թե ինչու եմ ես եկել աբորտ անելու, շատ երկար սպասեցրին ինձ միջանցքում, հետո տարբեր կաբինետներ սկսեցին ուղարկել, և վերջապես տարան այն սենյակ, որտեղ պետք է ինձ աբորտ անեին: Սենյակը չվերանորոգված էր, այնտեղ դրված էին գինեկոլոգիական աթոռ և մի շարք տարբեր գործիքներ: Պառկեցի աթոռին, դիմացս մեծ պատուհաններ էին, ոտքերս, հետո ողջ մարմինս սկսեցին դողալ անհանգստությունից, սրսկողը ձեռքս բռնեց, ասաց՝ հանգստացի, և արդեն ինձ հիշում եմ պալատում, որտեղ ամենադաժանն էր ինձ սպասվում: Պալատում պառկած էին երեք հղի կանայք, որոնք պառկել էին հղիությունը պահպանելու համար, իսկ ես պառկել էի, քանի որ աբորտ էի արել: Անդադար խոսում էին, մեկը լացում էր, մյուսը ինձ էր նայում ուշադիր, իհարկե ինձ որևէ բան չասացին, բայց շատ պարզ էր, թե ինչ մտածեցին իմ մասին: Ես հավիվ ուշքի եկա, արագ հագնվեցի և արագ դուրս եկա այդ սենյակից, մի քիչ նստեցի միջանցքում և հետո գնացի տուն: Դեպքից անցել են հինգ երկար տարիներ, բայց այդ հիշողությունները, կասկածները, հայացքները, երեք հղիների ձայները, մեղավորության զգացումը երևի միշտ կմնան ինձ հետ:



Ամեն մի
կշտանալու
համար տրված
կտտանք թեք
անար։

Հանգստացի՛ր։

Լեսբի և բիսեքսուալ կանանց վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մարտահրավերներն ու խնդիրները:



Վերջապես որոշել էի գնալ բժշկական հաստատություն ապահովագրությամբ՝ գինեկոլոգի ծառայությունից օգտվելու, քանի որ ինչ-որ արտադրություն ու ցավեր ունեի: Հերթագրվելուց հետո մինչ սպասում էի սենյակի դիմաց մի շարք այլ մարդկանց հետ, դուրս եկավ բուժքույրը ու բոլորի առաջ ասաց. «եթե կույս չես, ապա միկապարկդ դատարկիր, եթե կույս ես՝ չէ, որ մտնես բժշկի մոտ»: Չհասկացա, թե կոնկրետ ինչ նկատի ուներ. սեռական հարաբերություն ունեցե՞լ եմ, թե չէ, ներթափանցող հարաբերություն ունեցե՞լ եմ, թե չէ և այլ տարբերակներ, քանի որ նույնասեռ հարաբերություններ եմ ունեցել կանանց հետ ու վստահ չէի ներթափանցման խորության հետ կապված: Տեղում չկարողացա հարցնել, քանի որ միջանցքում ինձնից բացի ևս մոտ 10 մարդ սպասում էր տարբեր սենյակների դիմաց: Ու ընդհանրապես չէի հասկանում, թե ինչու է միջանցքում ասում այդ ամենը: Երբ հերթս հասավ, ու բուժքույրը կանչեց ներս, բնականաբար առանց միվելու մտա սենյակ: Սենյակում բժշկից ու բուժքույրից բացի ևս երկու կին կար, որոնք ենթադրաբար նախորդ պացիենտներն էին, որոնք դեռ դուրս չէին եկել: Բուժքույրը այդ

կանանց ներկայությամբ նորից հարցրեց. «կույս ե՞ս, թե չէ»: Ես էլ ասացի, որ դժվարանում եմ պատասխանել այստեղ, պետք է բժշկի հետ խոսեմ, նոր: Մոտեցա բժշկին ու հարցրի, թե միկել-չմիկելու հարցը ոնց հասկանամ: Հարցրեց՝ ամուսնացած եմ, թե ոչ: Ասացի՝ դա ինչ կապ ունի: Ասաց. «նկատի ունեմ սեռական կյանքով ապրում ես, թե չէ»: Ասացի, որ ապրում եմ, բայց կանանց հետ եմ սեռական հարաբերություն ունեցել ու ուզում եմ հասկանալ... Տարօրինակ նայեց վրաս ու վայրացած ու մունաթով ասաց. «հիմա չեմ հասկանում՝ կույս ե՞ս, թե չէ, նորմալ ասա»: Այս ամբողջ ընթացքում բուժքույրը ու երկու այլ կանայք սենյակում էին ու ուշադիր լսելուց հետո սկսեցին շատ տարօրինակ նայել ու չափել ինձ: Առանց տարակուսելու՝ ջղայնացած դուրս եկա սենյակից:

Մեծ հիասթափություն ապրեցի, վախենում էի շատ, որ տեղեկությունը, որ նույնասեռական կին եմ, կտարածվի: Երկար ժամանակ խուսափում էի գնալ մասնագետի մոտ, ստիպված վճարովի ծառայությունից օգտվեցի ամիսներ անց, երբ ծանոթների միջոցով հնարավորություն եղավ գտնել ադեկվատ ու փորձված այլ մասնագետ:

Եվդի կանանց վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մարտահրավերներն ու խնդիրները:

Տիկին Սիսեի պատմությունը

Տիկին Սիսեին ծանոթացել էի գյուղ Ալագյալում, որտեղ եկդի կանանց համար վերարտադրողական առողջության վերաբերյալ դասընթացներ էի անցկացնում: Տիկին Սիսեն շատ բարի և խելացի կին էր, որի հետ շատ հաճելի էր զրուցել և լսել իր կյանքի պատմությունը: Նա ավգությամբ եկդի էր, որին շատ վաղ տարիքում իր ամուսինը փախցրել էր դպրոցից, և ծնողները նրան ամուսնացրել էին դեռևս 13 տարեկանում: Տիկին Սիսեն իր կյանքի ընթացքում ունեցել էր հինգ երեխաներ և 42 տարեկան հասակում ձեռք էր բերել բավում առողջական խնդիրներ վաղ հասակի հղիությունների և այլ խնդիրների պատճառով: Նա 42 տարեկան էր, բայց երբ նայում էիր իրեն, հասկանում էիր, թե որքան դժվար կյանք էր ունեցել: Տիկին Սիսեի ամուսինը պարբերաբար նրան ենթարկում էր ընտանեկան բռնության՝ հաճախ ֆիզիկական ուժ էր կիրառում և տիկին Սիսեի վաստակած ողջ գումարը ծախսում էր ալկոհոլային խմիչք գնելու համար: Մեր հերթական դասընթացի ժամանակ հրավիրեցինք բժիշկ մասնագետի,

որը բժշկական խորհրդատվություն տվեց մի շարք կանանց: Կանանց մեջ էր նաև տիկին Սիսեն, և շուտով պարզ դարձավ, որ նա ուներ բազմաթիվ առողջական խնդիրներ, մասնավորապես՝ սրտանոթային անբավարարվածություն, շաքարային դիաբետ, սեռական օրգանների բարդ տեսակի իջեցում: Տիկին Սիսեն ֆինանսապես ի վիճակի չէր դիմել բժշկական հաստատություն բուժման և վիրահատության նպատակով: Մեր դասընթացներն ավարտվեցին, բայց ես փորձում էի մտածել, թե ինչպես կարող եմ օգնել տիկին Սիսեին: Բազում նամակներ ուղղեցինք տարբեր կառույցներ և հիվանդանոցներ, կազմակերպեցինք դրամահավաք, որի շնորհիվ հավաքվեց որոշակի գումար, և երբ ես ուրախացած վանգահարեցի տիկին Սիսեին, որ հայտնեմ, որ գումարը հավաքվել է, և ինքը կարող է գնալ վիրահատության, պարզ դարձավ, որ տիկին Սիսեն մահացել էր... Տիկին Սիսեն մահացավ 42 տարեկան հասակում մեկանում տիրող անարդարության, անհավասարության և անտարբերության պատճառով: